

## ՆԱԽԱԲԱՆ

«Դայ ժողովրդական բեմադրական պարը» հետագոտության հիմնական նպատակը հայ պարային մշակույթի մի ուղղության՝ ժողովրդական բեմադրական պարարվեստի ծևավորման ու գարգացման առանձնահատկությունների ուսումնասիրումն է XX դարի սկզբից մինչև 30-ական թվականները:

Դայ էթնոպարագիտության գարգացման հետ է կապվում հայ պարարվեստի մշակված պատմություն ունենալու հարցը: Այն հնարավորություն է տալիս պատմամշակութային գործընթացների համատեքստում առավել ճշգրիտ լուսաբանել ազգային պարային մշակույթին վերաբերվող տարրեր հարցեր:

XX դարի առաջին կեսին հայ ժողովրդական պարը բեմական նորովի մեկնարանություններ է գտնում, որը դրսնորվում է ժողովրդական ինքնագործ ու պրոֆեսիոնալ պարային մշակույթում:

Դայ պարարվեստի այդ շրջանի վերաբերյալ պատմամշակութային ուսումնասիրության անհրաժեշտությունը պայմանավորված է մի շարք գործոններով:

XX դարի առաջին քառորդում Դայաստանում տեղի ունեցան քաղաքական ու մշակութային խոշոր տեղաշարժեր, որոնք արտացոլվեցին նաև պարային մշակույթում:

Սույն հետագոտությամբ փորձ է արվում ներկայացնել այդ շրջանում հայ ժողովրդական պարարվեստի բնագավառում կատարված փոփոխությունները, նոր ուղղությունների ծևավորման առանձնահատկությունները, այդ թվում՝ պարակրթության ուղղությունները, արտերկրից ներմուծված ոճական ագդեցությունները և այդ պարագայում ավանդական պարի պահպանումը, որն արդեն տեղափոխվում է նաև բեմ:

Աշխատությունն ըստ եռթյան բեմական պարարվեստի նախորդ շրջանի (XIX դ. երկրորդ կես - XX դ. սկիզբ) պատմության շարու-

նակությունն է և ներկայացնում է միայն ժողովրդական բեմադրական պարարվեստը: Այդ ուղղության վերաբերյալ ուսումնասիրությունները սակավաթիվ են, իսկ հայ դասական պարարվեստի ուսումնասիրությունն առանձին բեմա:

Այս հետագոտությունը ոչ միայն ուղենչում է ժողովրդական ավանդական պարարվեստի կապը բեմադրական պարարվեստի հետ, այլև ընդգծում այն նախապայմանները, որոնց առկայությամբ ծևավորվեց ու գարգացավ հայ պրոֆեսիոնալ ժողովրդական բեմադրական արվեստը:

Աշխատանքում փորձում ենք ներկայացնել նաև հայ էթնոպարագիտության լիսիցյանական հիմունքները, նպատակ ունենալով ամբողջացնել հայ պարարվեստի վերաբերյալ եղած տեսական գիտելիքները:

Ուսումնասիրությունը հիմնված է էթնոպարագիտության ասպարեզում ընդունված մեթոդների վրա, որի ատադը հայտնի ազգագրագետ, պարագետ Արքուիի Լիսիցյանի մշակած պարագիտության հիմունքներն են, ըստ որի կատարվում է ժողովրդական պարային նյութի գրանցում, ժանրերի դասակարգում և վերլուծում:

XX դարի սկզբից մինչև 30-ական թվականները հայ ժողովրդական բեմադրկան պարարվեստում նշանակալից գործունեությամբ առանձնանում են այդ ասպարեզի երախտավորներ Արքուիի Լիսիցյանն ու Վահրամ Արիստակեսյանը:

Արք. Լիսիցյանը մեծ ներդրում ունի որպես տեսաբան ու բեմադրող, իսկ Վ. Արիստակեսյանը՝ հայ ժողովրդական պարերի բեմադրող ու շնորհալի պարող:

Աշխատությունում հակիրճ անդրադառնում ենք Արքուիի Լիսիցյանի և Վահրամ Արիստակեսյանի կենսագրություններին, գիտական և մշակութային գործունեությանը՝ տաղանդա-

Վոր այդ արվեստագետների ռիմանկարներն անավարտ չթողնելու համար:

Սույն աշխատանքը նպատակ ունի վեր

հանել XX դարի 20-30-ական թվականներին հայ պարարվեստի այս ասպարեզում տեղի ունեցած իրողություններն ու հետագա զարգացումնեղոյ: